

37

Wh-23

1 MAR 2010

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Ազգային Պատրիարքարանի

Ս Պ Ի Տ Ա Կ Տ Ե Տ Ր

ԿԱՄ

ՄԱՍՆԱԿԻ ՀԱՄԱՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ

1879-80 Ա.Մ.Ի.

ԱՌՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎՆ

ԱԶԳ. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Printed in Turkey

Կ. ՊՕԼԵՍ

1880

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Կ. Ա. ՊԱՐՈՆԵԱՆ, Ի ՏՊԱՐԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ
ԳՈՒՄ-ԳԱՐՈՒ, ՊԱՏՐԻԱՐԽԱՐԱՆ ՓՈԴԴՅ

37
4-23



31.01.2013

44 9/2

8527



741
39

371
71

Printed in Turkey

5

ԱՆԴԱՄԲ

ՈՒՍՈՒՄՆԻ ԽՈՐՀՐԴՈՅ

ԱՆԴԱՄԲ

ՕԺԱՆԴԱԿ ՄԱՍՆԱԽՈՐԴ

Պողոս Էֆենտի	Պառնասեան Արեւապետ	Գրիգորիստուրէֆ. Ղազարոսեան	Արեւապետ
Սիմէոն	» Եղորտեան Արեւապետ	Գալուստ	» Գույունեան Արեւապետ
Սարգիս	» Էլիկիւզէլ	Ռէթէոս	» Թաղէոսեան
Յարութիւն	» Խանտանեան	Թաղւոր	» Երկանեան
Ներսէս	» Ներսէսեան	Պողոս	» Գալուստեան
Աւետիս	» Տ. Սահակեան	Նիկողոս	» Թաղէան (1)
Եղնիկ	» Փափաղեան	Իգնատիոս	» Մուրաթեան (2)

ԳԻՒՆԱԴՊԻՐ

Նշան Էֆենտի Փափաղեան

(1) Հրաժարեալ
(2) Ընտրուած ատեն հրաժարած :

ՀԱՄԱՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ

1879-80 ՏԱՐԻՈՑ

ԱՌ

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Ամենապատիւ Ս. Պատրիարք Հայր
Նախագահ Ազգային Վարչութեան Քա-
ղաքական Ժողովոյ .

Ռուսմեական խորհուրդս 'ի 14 մա-
յիսի 1879 պաշտօնի կոչուելով ձեռք ա-
ռաւ անմիջապէս դատարարական
փափուկ և ծանր խնդիրն և աւասիկ կը
փութայ իւր միամեայ պաշտօնավարու-
թեան արդիւնքը ներկայել :

Չէր արժեք անհատական խնդիր-
ներու համար ժամեր զոհել, ընդհանուր
դատարարական համար ընդհանուր
անօրէնութիւն պէտք էր, և շատ բարե-
բաղդ պիտի ըլլար խորհուրդս, եթէ առ-
այս յաջողեր իւր պաշտօնավարութեան շըր-
ջանին մէջ կարևոր ծառայութիւններ մա-
տուցանել :

Սակայն խորհուրդս իւր այս մասին

բաղձանաց և ջանից համապատասխանող
միջոցներէ զուրկ էր ,

Միամեայ պաշտօնավարութեան մը
արդիւնք ակներեւ ցոյց պիտի տան թէ
ի՞նչ կարող է ընել ռուսմեական մարմինն
երբ իւր տրամադրութեան ներքեւ պէտք
եղած գործիք և օժանդակութիւն կը
պակսին և իւր գոյութիւնն իսկ կարծես
Պահմանադրութեան 45րդ յօդուածը բո-
լորովին մեռեալ տառ մը չընելու սահ-
մանուած է, թէ և այն յօդուածն ևս
իւր իրաւասութեան սահմանը լսիտ ան-
ձուկ դժած է :

Ստանոր աւելորդ համարելով յա-
ռաջ տանել մեր դիտողութիւնները,
կ'անցնինք մեր համարատուութեան :



Ընդամենը Տեսուչ Ազգային վարժարանաց

Ուսումնական խորհուրդս իւր կազմութենէն անմիջապէս ետք՝ ի քննին առնելով Մայրաքաղաքիս Ազգային վարժարանաց վիճակն և զանոնք ըստ մեծի մասին անմիջական բարեկարգութեան կարօտ տեսնելով, ուշադրութիւն տուաւ իւր պաշտօնին գործնական կատարման և հարկ համարեց անոր ամենէն լուաւ գոյն եղանակը փնտռել և փոխանակ ի զուր ժամավաճառութեան՝ նոր ծրագիրներ և որոշումներ գործադրելու՝ դաստիարակութեան համար արդէն գտնուած ծրագիրներն և որոշումները գործադրելու աշխատել, և առ այս ընդհանուր տեսչի մ'անհրաժեշտ պէտքն՝ ինչպէս նախորդ Ուսումնական խորհուրդներն ճանչցեր, երկիցս անգամ ընտրել և ժամանակին Գաղ. ժողովներն որոշել և նոցա ամսականներն տրուել են, ինչքն ևս տեսնելով նախորդ վարչութեանց այս տնօրէնութիւնը որ շատ օրինաւոր է վարժարանաց միօրինակ ուղղութեան և բարեկարգութեան համար և Ուսումնական խորհուրդոց մեծ գիւլութիւն կընծայէ իրենց պաշտօնին մէջ և նկատելով որ Ազգային ժողովն Կեդր. Մատուկի տարեկան հաշուեկշիւին մէջ Ազգային դաստիարակութեան համար 30,000 դրշ. զուտ մը նշանակած է, պաշտօնական ծախուցմամբ հրաւէր կարգաց սոյն պաշտօնըն ստանձնել ուղղ ազգայնոց ներկայանալ խորհուրդոյ:

Պատկառելի Քաղ. ժողովն՝ Խորհրդ. գոյս այս նախապատրաստական որոշումն իբր եղեալ և գործադրութեան սկսեալ տնօրէնութիւն մը համարելով՝ հարկ համարել էր գործադրութիւնն առ կախելու աղդարարութիւն տալ, հետեւեալ պաշտօնագրով.

Մեծապատիւ Ատենապետ Էֆէնտի
Ազգային Ուսումնական խորհուրդոյ

Դիւանատունէն տեղեկացայ որ Պատուարժան խորհուրդդ պաշտօնական ծախուցում մը տալով ի հրատարակութիւն ազգային վարժարանաց համար տեսուչ մը կը փնտռէ, և կը խոստանայ երկու հազար դրշ. թոշակ հատուցանել:

Փափաքելի էր որ այս ծախուցումը հրատարակութեան չտրուած Պատուարժան Խորհուրդդ հաճեր միանգամ բանակցիլ Քաղ. ժողովոյ հետ, և թէ՛ այս նոր ծախուց՝ զոր ի հարկէ Կեդր. մատուկը պիտի վճարէ, և թէ՛ ընդհանուր տեսուչ մը կարգելու տնօրէնութեան վրայ անոր հաճութիւնն ստանալ, սակայն եթէ այս կարեւոր պայմանը զանց առնուած է՝ թերեւս մոռացմամբ՝ կը խնդրեմք որ գէթ Ձեր տնօրէնութեան գործադրութիւնն չնորհ ընէք առկախել, և վարժարանաց տեսուչը չանուանած՝ բանակցիլ Քաղ. ժողովոյ հետ:

Աւելորդ չէ յիշել Պատուարժան խորհրդոյ որ թէ՛ և Ազգային ժողովն դաստիարակութեան պիտոյից համար Վարչութեան խնդրած 30 հազար դրշ. վարել քուէարկած է, սակայն դեռ չէ սահմանուած Վարչութեան կողմէ թէ ի՞նչ պիտոյից պիտի ծառայէ այդ գումարը, որու մանրամասնութիւնը պիտի հաղորդուի նախապէս Ազգային ժողովոյ:

Մնամք աղօթաբար

Պատրիարքական փոխանորդ
Մատթէոս Եպիս. Իգմբրլեան

9 Յունիս 1879

Ի Պատրիարքարանի Հայոց

Ուսումնական խորհուրդս չէր յուսար որ Պատ. Քաղ. ժողովն՝ Խորհրդոյս զլանալ ուղեր իրեն վերաբերեալ կէտի մը վրայ նոյն իսկ նախապատրաստական միջոցներու ձեռնհասութեան իրաւունքը, քանզի հարկաւ գիտէ որ Ուսումնական խորհուրդն իբր վարչութեան մի ճիւղը կրնայ իւր պատասխանատուութեան ներքեւ դաստիարակութեան համար պէտք եղած միջոցները խորհիլ, որոշել և Քաղ. ժողովոյ և անոր միջոցաւ Ազգային ժողովոյ առաջարկելով, անոնց հաւանութիւնն առնելէ ետե գործադրել:

Ուստի հետեւեալ պատասխանադրէն ուղղեց առ Քաղ. ժողովն.

Կերպատիւ Պատրիարքական ֆոխանորդ
Սրբազան Հայր Նախագահ Ազգ. Վարչութեան Քաղաքական ժողովոյ

Մեր՝ ամսոյս 8 թուականաւ և 10 համարաւ նամակին միջոցաւ խնդրած է ինք Ձեր Սրբազնութենէն որպէս զի չնորհ ընէք գրաւոր կերպիւ զեկուցանել մեզ Ազգ. Վարչութեան Դաստիարակութեան յատկացուցած տարեկան գումարը՝ զոր արդէն Խորհրդոյս Ա. նստին մէջ բերանացի ծախուցած է իք մեզ և որուն համար արդէն 30000 դրշ. գրուած է ազգային հաշուեցոյցին մէջ:

Մինչդեռ մեր սոյն նամակին պատասխանին կապաւինը, զոր տակաւին ընդունելու պատիւ չունեցանք, Ձեր Սրբազնութիւնը 383 թուահամարաւ նամակաւ մը կը ծախուցանէ թէ Դիւանատունէն տեղեկացած է որ լրագրաց միջոցաւ պաշտօնական ծախուցմամբ մը Խորհուրդս ընդհանուր տեսուչ մը կը փնտռէ 2000 դրշ. ամսական թոշակաւ, Ձեր Սրբազնութիւնը կը յարէ թէ փափաքելի էր որ այս ծախուցումը հրատարակութեան չտրուած, Քաղ. ժողովոյ հետ բանակցութիւն ըլլար, և այս նոր ծախուց և ընդհանուր տեսուչ կարգելու

տնօրէնութեան վրայ անոր հաճութիւնն առնուր: Ձեր Սրբազնութիւնը կարծելով ուրեմն թէ այս կարեւոր պայմանը զանց առնուած է՝ թերեւս մոռացմամբ՝ կը խնդրէ որ յիշեալ տնօրէնութեան գործադրութիւնն առկախեմք, և ընդհանուր տեսուչը չանուանեմք առանց Քաղ. ժողովոյ հետ բանակցելու և կը յիշեցընէ մեզ որ թէ՛ և Ազգ. ժողովը դաստիարակութեան համար 30,000 դրշ. ի վարկը քուէարկած է, սակայն դեռ չէ սահմանուած Վարչութեան կողմանէ թէ ի՞նչ պիտոյից պիտի ծառայէ այդ գումարը, որու մանրամասնութիւնը պիտի հաղորդուի նախապէս Ազգային ժողովոյ:

Ուսումնական խորհուրդս ցաւ ի սիրտ տեսաւ որ Քաղ. ժողովն աճապարեւ է իբր եղեալ և գործադրութեան սկսեալ տնօրէնութիւն մը համարիլ Խորհրդոյս մի միայն նախապատրաստական որոշումները, և հարկ համարել է գործադրութիւնն առ կախելու ազգարարութիւն տալ մինչդեռ տակաւին գործադրութեան իսկ սկսուած չէ, Ձերք յուսար որ Քաղ. ժողովը Ուսումնական խորհրդոյ դրլանալ ուղէ իրեն վերաբերեալ կէտի մը վրայ նոյն իսկ նախապատրաստական միջոցներու ձեռնհասութեան իրաւունքը, քանզի հարկաւ գիտէ որ Ուսումնական խորհուրդս իբր Վարչութեան մի ճիւղը կրնայ իւր պատասխանատուութեան ներքեւ դաստիարակութեան համար պէտք եղած միջոցները խորհիլ, որոշել և Քաղ. ժողովոյ և անոր միջոցաւ Ազգային ժողովոյ առաջարկելով, անոնց հաւանութիւնն առնելէ ետե գործադրել:

Այս սկզբամբ էր որ Խորհուրդս իւր կազմութենէն անմիջապէս ետքն ուշադրութիւն տալով իւր պաշտօնին գործնական կատարման, հարկ համարեց անոր ամենէն լուաւ գոյն եղանակը փնտռել, և փոխանակ ի զուր ժամավաճառութեան նոր ծրագիրներ պատրաստելու, Դաստիարակութեան համար արդէն գրաւուած ծրագիրներն և որոշումները գործադրելու աշխատիլ: Հետեւաբար մինչեւ հիմայ կազմուած Ուսումնական խորհրդոց որոշումներն, առաջարկած միջոցներն, պատրաստեալ և ընդունեալ ծրագիրներն և կանոնադր-

ութիւնները աչքէ անցնելով, իւր գործողութիւնն հիմնաւոր եւ տեւողական ընել արժանաւորեց :

Ուսումնական խորհուրդս ասոր համար պէտք եղած թղթերն ու տետրակները Պատարարական Դիւանատունէն քանիցս անգամ խնդրեց եւ միայն մասամբ իւր կրցաւ ցարդ ձեռք բերել, իսկ մնացեալներուն համար տակաւին պատասխան իսկ չէ ընդունած իւր գրութեան :

Խորհուրդս իւր ձեռք բերած թղթերն ու չի ուշով քննեց եւ նկատեց որ իւր նախորդին 1876-1878 տարւոյ համարատուութեան մէջ մինչեւ ցարդ կազմեալ Ուսումնական խորհուրդոց ամբողջեան եւ ազգային գործոց մէջ արժանի տեղ մը չբռնելուն պատճառն գտաւ իւր համարատուութեան համար սահմանեալ գումարի մը պակսութիւնը : Խորհուրդս այս մասին խիստ իրաւացի գտաւ իւր նախորդին հետեւեալ խորհրդածութիւնները .

« Ազգային կրթութեան յառաջդիմութեան գլխաւոր արգելքներէն մին ալ է դաստիարակութեան համար յատուկ գումար մը չմիջնել ցարդ սահմանուած չըլլալն, եւ կարծէր որ Ազգային Վարչութեան բոլոր յանձնաձեռքը գրաւեք այս խնդիրը » :

« Ենչպէս նախորդ ուսումնական խորհուրդները նմանապէս եւ ներկայ խորհուրդն այս մասին ընդարձակ յայտարարեց յատուցած է ազգային Վարչութեան Կեդր. Մատակի հաշուեկշիւին մէջ գումար սահմանել տալու համար, եւ քանիցս անգամ ալ անձամբ դիմած եւ տարեկան 120 հազար զորքի գումարի մը կարօտութիւնը մանրամասնորէն ցոյց տալով առ այժմ 5300 զրջ ամսական գումարի մը անհրաժեշտ պէտքը նշանակած է : Աւելորդ է ըսել թէ՛ ինչ պէտքերու պիտի դորձածուի այս գումարը . եւ թէ՛ Ազգային Վարչութիւնը յաջողեալ յատակացնել եւ անխախտ վճարել տալ, այդ գումարէն բաժին պիտի ելլէր Կեդրոնական վարժարանին . արժան է որ ժողովրդէն առնուած գումարն մէկ մասն գէթ ասանկ խորհուրդ մը վճարուի : մաս մ'ալ պիտի յատկացնար ստորագրեալ պաշտօնէից, ինչպիսի

« Են վարժարանաց այցելու տեսուչներ, որոց անհրաժեշտ կարեւորութիւնն ի բաղմաց հետէ ձանջողած է եւ առանց անոնց կարելի չէ անաչառ կերպով վարժարանաց մէջ տեղի առնեցած պակասութիւնները ու զեղծումները քննել եւ դարման տանել եւ այլն » :

Այս հատուածէն կրնայ մակարեւելի ընդհանուր տեսչի մը պէտքը : Մեր առած տեղեկութեանց նայելով նախորդ Ուսումնական խորհուրդներուն ժամանակ արդէն այսպիսի երկու տեսուչներ գործածուած էին թոշակ վճարելով, մին բարեխիշտակ Սիմոն Էֆ. Միքայէլեան եւ միւսը Սրբ. Տ. Յովհաննէս քահանայ Հիւնքեարպէյէնտեան : Հետեւաբար Խորհուրդս ընտրութեան ձեռնարկելէ առաջ որ Զեք Սրբազնութեան ուղղեալ վերոյիշեալ նախկին պատասխանն ընդունելէ ետեւ պիտի ըլլար . օգտակար համարեց լրագրաց միջոցաւ ծանուցամբ մը հրաւիրել ձեռնհաս անձինք ի մրցում այս բացուելիք պաշտօնին համար :

Արդ եթէ Զեք Սրբազնութիւնը հաճի մեր վերոգրեալ նամակին պատասխան տալ, խորհուրդս միայն նախնական ընտրութիւն մը պիտի կատարէ ընդհանուր տեսչի եւ անոր ասականը որոշէ, այնուհետեւ Դաստիարակութեան յատկացեալ գումարէն մաս մը պիտի հանէ վարժապետներէ եւ ձեռնհաս անձերէ բաղկացեալ մնայուն յանձնախմբի մը որ շաբաթի անգամ մը գումարուելով եւ իւրաքանչիւր անգամի ամեն նիստի ներկայութեան վարձ մը տրուելով, պաշտօն պիտի ունենայ դասագրքերը եւ դասատուաց կարողութիւնը քննել եւ որոշել, գրականութեան եւ լեզուի խնդիրներով շրջալիլ, եւ գրեթէ Ակադէմիա մ'ըլլալ որուն պէտքն արդէն քանիցս անգամ Ուսում. խորհրդոց համարատուութեանց մէջ յիշուած է : Ուստի ընդհանուր տեսչի ընտրութեան, Ակադէմիայի հաստատութեան, եւ Կեդրոնական վարժարանի կազմակերպութեան ծրագիրներն ի նկատ առնելով, Խորհուրդս դաստիարակութեան վարկին մնացեալ մասը նմանապէս Ազգին ամենէն օգտակար կերպիւ գործածելու եղանակը պիտի խորհի եւ որոշէ եւ Քաղ. եւ Ազգ. ժողովոց պիտի ներկայացը-

նէ իբր առաջարկ թէ իւր ըրած տեսչի ընտրութիւնը, եւ թէ դաստիարակութեան վարկին գործածութեան մանրամասնութիւնը :

Նոյն միջոցին Խորհուրդս հարկաւ պիտի բանակցի իւր առաջարկը Քաղ. ժողովոյ ընդունել տալու համար, ինչպէս նաեւ Ազգային ժողովոյ մէջ դրան պիտի պաշտպանէ : — Բայց եթէ տակաւին Խորհուրդս չխորհած, իւր որոշումը չտուած եւ իւր առաջարկը չը ներկայած, Քաղ. ժողովը հարկ համարի միջամտել, Ուսումն. խորհրդոյ ձեռնհասութիւնն առ ոչինչ գրելով, այս անվստահութիւն կենթադրէ եւ յայտնի է որ այս պարագայից մէջ Ուսումն. խորհրդոյ արդի անդամը ոչ եւս կրնալով արժանապատուութեամբ պաշտօն վարել պիտի պարտաւորին հրաժարական տալու : Կը խնդրեմք ուրեմն որ Զեք Սրբազնութիւնը շնորհ ընէ վերոգրեալ նամակին եւ ներկայիս գրաւոր պատասխանը տալ, որպէս զի Խորհուրդս կարենայ արդիւնաւոր կերպիւ գործել : Մնամք խորին յարգանքով

Ի դիմաց Ազգային Ուսումն. խորհրդոյ
Ատենադպիր Ատենապետ
Սիմոն Եագըճեան Պ. Պառ.Ասատեան
29 Յունիս 1879

Խորհուրդս ստիպուեցաւ առ կախել վերոյիշեալ կարգադրութիւնն վստահի թէ Քաղ. Պատկառելի ժողովն միննոյն ազդարարութիւնն ըրած էր այս մասին, եւ թէ դրամական օգնութեանէ շուրկ կը գտնուէր բոլորովին :

Կեդրոնական վարժարան

Դաստիարակութեան ամենէն ըստի-սլոշական պիտոյքներէն մինն Կեդր. վար-

ժարանի մը հաստատութիւնն էր, որոյ պէտքն ի վաղուց Ազգային ժողովներէն Ազգ. Վարչութիւններէ զգացուած է, եւ ազգասէր անձանց օժանդակութիւնն ու աշխատութիւնը արդէն պատրաստած է չէնքն ի Ղալաթիա, եւ նախորդ Ուսումնական խորհուրդները բաւականատեն աշխատած են այս մեծ հաստատութեան, սակայն դրամական չգոյութեան պատճառաւ անկարող գտնուած են ի գլուխ հանել իրենց աշխատութիւնն, պարտ համարեց այսպիսի կարեւոր ուսումնարանի մը բացումը փութացնել եւ սակայն դրամական միջոցներէ զուրկ հարկ տեսաւ նախ իւր պիւտճէն որոշել : Հետեւապէս Յունիս 8 եւ 29 թուական կըրկին նամակներով Պատկ. ժողովոյդ գիմեց եւ խնդրեց որ շնորհ ընէ պաշտօնական կերպիւ ծանուցանել իրեն դաստիարակութեան պիտոյից յատկացած գումարին քանակութիւնը :

Ահաւասիկ յիշեալ նամակները(1) .

Գերապատիւ Պատրիարքական Փոխանորդ Սրբազան Հայր, Նախագահ Ազգ. Վարչութեան Քաղաքական ժողովոյ :

Ազգային Ուսումնական խորհուրդս անցեալ շաբթու Զեք Սրբազնութեան Նախագահութեան ներքեւ գումարուելու առթիւ արդէն խնդրած էր զխմալ թէ Կեդրոնական Վարչութիւնն ի՞նչ գումար յատկացուցած է հաշուեկշիւին մէջ Դաստիարակութեան համար : Զեք Սրբազնութիւնը հաճեցաւ բերանացի կերպիւ յայտարարել թէ յիշուած հազարի գումար մը պիտի յատկանայ :

(1) Յունիս 29 թուականաւ նամակը արդէն ընդհանուր տեսչի խնդրոյն մէջ հրատարակուած է, տես երես 3 :

Խորհուրդս Ձեր Սրբադնութեան այս կա-
րեւոր յայտարարութիւնը նկատողութեան առ-
նելով կը խնդրէ որպէս զի չնոր՝ ընէք գրաւոր
կերպիւ ծանուցանելու թէ արդեօք ի՞նչ եղա-
նակաւ՝ այսինքն կանխիկ թէ ամսէ ամիս պի-
տի վճարուի այս գումարն Ուսումնական խոր-
հրդոյ անտուկին՝ որուն հաստատութեան հարկ
կը տեսնէ սկզբամբ :

Յուսելով որ պիտի բարեհաճիք խնդրուած
տեղեկութիւնն հաղորդել մեզ :

Մնամք խորին յարգանք

ի Դիմաց Ուսումնական խորհրդոյ

Ատենադպիր Ատենապետ

Սիմեոն Եսաղաբեան Պ. Պառնասեան

8 Յունիս 1879

ի Խորհրդարան Ղալաթիոյ

Քաղ. Ժողովն Յուլիս 13 թուական
պաշտօնագրով հետեւեալ պատասխանը
տուաւ մեզ .

Մեծապատիւ Ատենապետ Էֆէնտի

Ազգային Ուսումնական խորհրդոյ

Ազգային վարժարանաց ընդհանուր տես-
չի խնդրոյն վրայ յունիս 29 ամսաթուով Ձեր
ուղղած գրութիւնն ընկալայ , որով ի պատաս-
խանի մեր նախորդ նամակին ցաւ կը յայտնէք
թէ Քաղ. Ժողովն կանխէր է իբր եղեալ տնո-
ւէնութիւն մը նկատել Ձեր նախապատրաս-
տական որոշումը , զոր տուած էիք վարժա-
րանաց ընդհանուր տեսչի խնդրոյն վրայ , եւ
այս մասին ինչ ինչ դիտողութիւններ ընելէ
ետեւ՝ կը յարէք թէ Ուսումնական խորհուրդը
չէ կարող իւր պաշտօնը շարունակել , եթէ
այսպիսի խնդրոց մէջ խորհուրդն իւր որոշու-
մը չը տուած եւ առաջարկը չը ներկայացու-
ցած , Քաղ. Ժողովը միջամտէ :

Ձէնք կրնար ենթադրել որ այս խնդրոյն
նկատմամբ մեր ամենապարզ մէկ դիտողու-
թիւնը զոր թիւրիմացութեամբ Քաղ. Ժողովոյ

կը վերադրէք , Պատուարժան Խորհրդոյդ այս-
քան ցաւ պատճառէ եւ առիթ ընծայէ մինչեւ
իսկ իւր հրաժեշտին վրայ խորհելու : Քաղ.
Ժողովն ոչ միայն չմտաբերեր խափան եւ ար-
գել լինիլ խորհրդոյդ օգտաւէտ գործոց եւ
տնօրէնութեանց , այլ ընդհակառակն Ձեր ճը-
դուկն յարդիւնս ածելու , եւ ազգային դաս-
տիարակութեան պիտոյքներն՝ որ անհուն են
եւ բազմազան , փոքր ի շատէ գոհացնելու հա-
մար՝ ներկայ տարւոյ ելմտացոյցը ծրագրած ա-
տեն՝ վարչական ծախքերը մեծ խնայողու-
թեամբ հաշուած , եւ տարեկան 50,000 զրչի
գումար մը սահմանած է ինքնաբերաբար ,
դաստիարակութեան ծախուց համար : Սակայն
Ազգային Ժողովոյ յունիս 1 ի նիստին մէջ՝ ել-
մտացոյցին քննութեանն առթիւ վիճաբանու-
թիւն բացուելով՝ Քաղ. Ժողովոյ խնդրած այս
վարկին վրայ , խնդիր ծագեցաւ թէ ի՞նչ պէտ-
քեր գոհացնելու պիտի ծառայէ այս գումարն ,
եւ ի՞նչ եղանակաւ պիտի կատարուի ծախուց
բաշխումը , մանաւանդ որ երկուց երեսփո-
խանաց կողմէ ներկայացեալ առաջարկ մ'ալ
Մատենադարանին համար ամսական վեց ոսկի
նպաստ մը կը հայցէր . ուստի Համարակա-
լութեան դիւանը Քաղաքական Ժողովոյ կողմէ
յայտարարեց ի պաշտօնէ , թէ այս ծախուց
մանրամասնութիւնը Քաղ. Ժողովոյ կողմէ պի-
տի ներկայանայ Ազգային Ժողովին , հետեւա-
պէս Ժողովն եւս խնդրուած վարկը քուէար-
կեց , յանձնարարելով նաեւ Վարչութեան որ
Մատենադարանին համար խնդրուած նպաստի
խնդիրն ալ ի նկատ առնու , ծախուց բաշ-
խումն բրած ատեն :

Խնդրոյն այս վիճակին մէջ քաջ կրնաք
ըմբռնել թէ ամենէն առաջ հարկ է սահմանել
թէ ո՞չք են դաստիարակութեան անհրաժեշտ
պիտոյքները , որոց համար պիտի գործածուի
այդ վարկը , եւ թէ ի՞նչ կերպով տեղի պիտի
ունենայ քուէարկեալ գումարին բաշխումը ,
որ պիտի հաղորդուի նախապէս Ազգային Ժո-
ղովոյ : Սակայն այս գործողութիւնը դեռ չկա-
տարուած Պատուարժան Խորհուրդդ կանխեր
էր ինքն ինքնին վարժարանաց տեսչութեան
պաշտօնը , որ դադրած էր , վերահաստատել
եւ ոչ այսքան , այլ եւ 2000 զրչ. թոշակ մը

սահմանելով՝ պաշտօնական ծանուցմամբ տե-
սուչ փնտռել , մինչդեռ տակաւին չէր որոշ-
ուած թէ հա՞րկ է այդ պաշտօնէութիւնը վե-
րահաստատել թէ ոչ , եւ եթէ վերահաստատել
պէտք լինէր , որքան գումար կրնար սահման-
ուիլ դաստիարակութեան ծախուց այս ճիւղին
համար : Այս պատճառներով էր ահաւասիկ որ
Հարկադրեցանք Պատուարժան Խորհրդոյդ ուղ-
ղելով մեր նախորդ գիրն , խնդրել որ առկա-
խէք Ձեր որոշման գործադրութիւնը , որ ան-
շուշտ նախապատրաստական տնօրէնութիւն
մը չէր կրնար համարուիլ , քանի որ ամսա-
կան գումարին քանակութիւնը որոշուած էր ,
եւ հրապարակաւ կը խոստացուէր այս պաշ-
տօնին համար : Իսկ թէ քուէարկեալ գումարն
ի՞նչ եղանակաւ պիտի հատուցանէ Կեդրոնա-
կան մտտւիլը , կանխիկ թէ մաս առ մաս , ու-
րու վրայ տեղեկութիւն խնդրած էիք ասկէ
առաջ , այս երկրորդական խնդիր է , եւ ծա-
խուց բաշխումը կատարուելէ ետեւ՝ դիւրին
է կարգադրել , ուստի հարկ չկայ այժմէն այս
կէտին վրայ ուշադրութիւն դարձնելու :

Այլ տեսնէք որ մեր դիտողութեան նը-
պատահն ուրիշ բան չէր , եթէ ոչ շիտթու-
թեան տեղի չթողուլ եւ գործն իւր ընական
ընթացքին մէջ դնելով՝ կարգադրութիւնը դիւ-
րել , ուստի պէտք չէ որ պատուարժան Խոր-
հուրդդ այս դիտողութեան վերաբորում մը
ղգայ եւ կարծէ թէ իւր իրաւասութիւնը չը
յարգուիր : Ընդհակառակն թէ Քաղ. Ժողովոյ եւ
թէ մեր փափաքն է որ պատուարժան Խոր-
հուրդդ ամեն դիւրութիւն գտնէ իւր իրաւա-
ւորութեան սահմանին մէջ իւր պաշտօնը կա-
տարելու եւ օգտակար լինելու աղգին :

Ուստի կը յուսամք որ պատուարժան Խոր-
հուրդդ կը հաճի լրջաբար ուշադրութեան առ-
նուլ դաստիարակութեան այն պիտոյքներն ,
որոց պիտի ծառայէ քուարկեալ վարկը , եւ
իւր ծրագիրն պատրաստելով՝ Քաղ. Ժողովոյ
դիմել , համախորհուրդ նիստի մէջ պէտք ե-
ղած որոշումն ընելու համար : Աւելորդ չեմք
համարիլ յայտնել նաեւ որ Ձեր դիւանադըպ-
րին հրահանգ տրուած է արդէն ձեզ յանձնե-
լու այն ամեն թղթերն ու գրութիւնները ,
զորս Ուսումնական Խորհուրդդ խնդրած էր

յառաջագոյն , եւ եթէ ցարդ չէ կրցած ըս-
տանալ զանոնք , կրնայ իւր դիւանադըպրէն
պահանջել , որու դիւանատունը յանձնած է
արդէն այդ թղթերն :

13 յուլիս 1879

Մնամք աղօթարար

ի Պատրքնի Հայոց Պատրքին . Իոխանուրդ
Կ. Պոլիս Մատթէոս Եպիսկ. Իգմիրլեան

Խորհուրդս Վարչական այս հրաժա-
նին վրայ փութաց 1879 Օգոստոս 17 ի
հետեւեալ տեղեկագիրը և ծրագիրը ներ-
կայել Ազգային Վարչութեան .

Տեղեկագիր Ուսումնական խորհրդոյ

Ամենապատիւ Սրբազան Պատրիարք հայր ,
Նախագահ Ազգային Քաղաքական Ժողովոյ .

Ուսումնական Խորհուրդն Ազգային Վար-
չութեան փտահութեամբ պաշտօնի կոչուե-
լէն անմիջապէս ետք՝ իւր ուշադրութիւնը նը-
ւիրեց ազգային դաստիարակութեան ամենէն
ստիպողական պիտոյց . Ասոնցմէ առաջինն էր
Կեդրոնական վարժարանի մը հաստատութիւ-
նը , որոյ պէտքն ի վաղուց զգացուած է , եւ
ազգասէր անձանց օժանդակութիւնն ու աշ-
խատութիւնն արդէն պատրաստած է չէնքն ի
Ղալաթիա : Խորհուրդս պարտ համարեց այս-
պիսի կարեւոր ուսումնարանի մը բացումը փու-
թացնել , եւ այս նպատակաւ հարկ տեսաւ
նախ իւր պիւտճէն որոշել , ուստի իւր Յու-
նիս 8 եւ 29 թուական նամակներով Վարչու-
թեան դիմեց եւ խնդրեց որպէս զի պաշտօ-
նական կերպիւ շնորհ ընէ ծանուցանել իրեն՝
դաստիարակութեան յատկացուցած գումարը :
Վարչութիւնը կը պատասխանէր Յուլիս 13
թուականաւ , ծանուցանելով թէ Ազգային Ժո-
ղովը 50 հազար զրչի գումար մը յատկացու-
ցեր է դաստիարակութեան պիւտճէին , եւ կը
հրահարէր զմեզ որ այս գումարին գործածու-
թեան եւ Կեդրոնական վարժարանի բացման

համար ծրագիր մը պատրաստելով ներկայացը-
նենք :

Հետեւաբար պարտ համարեցինք յիշեալ
ծրագիրը անյապաղ պատրաստել եւ պատիւ
ունիմք այսօր Ձեր Սրբազնութեան ներկայել
զայն :

Սոյն ծրագրէն կրնայ տեսնուիլ որ Խոր-
հուրդս վերոյիշեալ գումարին անբաւականու-
թիւնը լեցնելու համար , ուրիշ եկամտից աղ-
բիւրներ եւս նշանակած է , իսկ ասոնց բոլո-
րին գործածութեան նկատմամբ միայն ընդ-
հանուր որոշումներ տուած է , թողլով որ իւր
հսկողութեան ներքեւ հաստատելի մատակա-
րար Հոգաբարձութիւնը կանոնաւոր հաշուա-
կութիւն մը բռնէ Ուսումնական խորհրդոյ
անտուկին մտից եւ ելից մանրամասնութեան
միայն : Այս հոգաբարձութեան պարտիքը մաս-
նաւոր կանոնադրութեամբ մը պիտի դնուի ,
զոր խորհուրդս ի դէպ ժամու պիտի ներկայէ ,
Կեդրոնական վարժարանի ուսմանց ծրագիրը
Խորհրդոյս հաստատած ազգային վարժարանաց
բարեկարգութեան կանոնադրին համաձայն
պիտի ըլլայ , եւ ճիշդաբար ուսմունք ընդու-
նող աշակերտաց համար պայման դրուած է
ազգային դաստիարակութեան ծառայել , իրենց
ձրի ուսմունք ընդունած ժամանակին կրկնա-
պատիկ պայմանաժամաւ : Ըստ որում այսօր-
ւան օրս մանկավարժութեան արուեստն մեծ
յառաջադիմութիւն կընէ յեւրոպայ եւ մեր ազ-
գին մէջ ուսմանց ըստ արժանւոյն աւանդու-
թեան խոշնդոտներէն մին է նաեւ ընտիր ման-
կավարժից նուագութիւնը , Խորհուրդս պէտք
տեսաւ այս ամենօգտակար արհեստին կարե-
ւորութիւնն առաւել զայն բարձրացնել , ուս-
տի Եւրոպայ օւսանողները զրկել ի առաջարկէ
մանկավարժութիւն սովորելով ի վերադարձին
ազգային դաստիարակութեան ծառայելու հա-
մար :

Խորհուրդս արդէն սկզբամբ որոշած էր
ազգային վարժարանաց ընդհանուր տեսուչ մը
կարգել , որ միանգամայն իւր գործադիր պաշ-
տօնեայն պիտի ըլլար , բայց ըստ օրում Կեդ-
րոնական վարժարանը իւր անմիջական հրահա-
ղութեան ներքեւ է , յարմար դատեց որ այս
պաշտօնեայն միանգամայն յիշեալ վարժարանին

տեսուչն ըլլայ ի մասնաւորի , թողլով որ եթէ
ազգային մէջ եկամուտներն եւ գործերն ըն-
դարձակին , ընդհանուր վարժարանաց եւ Կեդ-
րոնական վարժարանին առանձին տեսուչներ
անուանին :

Կեդրոնական վարժարանի դաստատուաց եւ
մանկավարժից նախնական ընտրութիւնը տես-
չին եւ հոգաբարձութեան խնամոց ձեռքինը ,
որպէս զի պիտի տեսնուին համեմատ թոշակներն եւ
ուրիշ մանրամասնութիւնները որոշեն , բայց
վերջնական ընտրութիւնը վաւերացման մի-
ջոցաւ խորհուրդս իրեն վերապահած է :

Ասկէ զատ ուսուցման եղանակի , լեզուի ,
դասադրոց եւ ուրիշ խնդիրներու կարեւորու-
թիւնն ուշադրութեան առնելով , Խորհուրդս
Կեդրոնական վարժարանի դաստատուաց Ակա-
դէմիա մը կազմելու համար գրական եւ գործ-
նական պաշտօններ սահմանեց , որոց մանրա-
մասնութիւնը ծրագրին մէջ նշանակուած է :

Վերջապէս խորհուրդս ազգային մատե-
նագարանն եւ դաստիարակութիւնը քաջալի-
րելու համար՝ որչափ կարելի է՝ մրցանակնե-
րու եւ նպատակներու հաստատութիւնն եւս չը
մոռցաւ , որոց համար նմանապէս ի դէպ ժա-
մու մասնաւոր կանոնադիր մը պիտի ներկայէ :

Այս է ահա ազգային դաստիարակու-
թեան անմիջական պիտոյից համար խորհրդոյս
առաջարկած միջոցները , որք իւր ծրագրին մէջ
ամփոփուած են : Կը յուսամք որ այս միջոցնե-
րն իւր գործնական եւ օգտակար Բաղաքա-
կան ժողովոյ հաւանութիւնը կ'ստանան , եւ
երբ ձեր Սրբազնութիւնն արժան դատի կըր-
նայ Խորհուրդս հրաւիրել պէտք եղած բացատ-
րութիւններն առնելու համար : Ուստի կը
խնդրեմք որ եթէ ներկայ ծրագիրը Բաղաքա-
կան ժողովոյ հաւանութեան արժանանայ , չը-
նորէն զայն Ազգային ժողովոյ հաղորդել
ի անդեկութիւն եւ պէտք եղած հրամանը
մեզ տալ , որպէս զի անմիջապէս գործադրու-
թեան ձեռնարկենք :

Մնաւր խորին յարգանքօք

Ազգային Ուսումնական խորհրդոյ

Ատենադպիր
Սիմոն Յազընեան

Ատենապետ
Պ. Պատմասեան

17 Օգոստ. 1879

Ի Խորհրդարան Ղալաթիոյ

ՄԲԱԳԻՐ

Ուսումնական խորհրդոյ Ազգ. Վարչութեան
վասն Դաստիարակութեան պիտուիին եւ անոր
գործադրութեան

Ուսումնական խորհուրդը դաստիարա-
կութեան Պիտուիին եւ անոր գործադրութեան
վրայ հետեւեալ տնօրէնութիւններն արժան կը
համարի ընդունիլ :

1. Ազգային դաստիարակութեան Կեդրո-
նական Պիտուիին կը բաղկանայ , նախ՝ Ազգա-
յին ժողովոյ սահմանած տարեկան 50,000 դրշի
կամ 500 լիւրայի գումարէն , որ Կեդրոնական
Սնտուկէն պիտի վճարուի Ուսումնական խոր-
հրդոյ անտուկին 1879 Սեպտեմբեր 1 էն մին-
չեւ 1880 ապրիլի վերջը , երկրորդ՝ Կեդրո-
նական վարժարանին կարող աշակերտներէն
առնուած թոշակներէն , երրորդ՝ Ղալաթիոյ
Ազգ. կալուածոց մատակարարութեան պար-
տուց յատկացեալ մասը հանելէ ետեւ՝ մնաց-
եալ հասոյթէն . չորրորդ՝ նուէրներէ , հան-
դանակութիւններէ եւ ուրիշ արտաքոյ կար-
գի եկամուտներէ :

2. Ուսումնական խորհուրդն այս եկա-
մուտներով Ղալաթիոյ Կեդրոնական վարժա-
րանը կը բանայ նախնական եւ երկրորդական
կանոնաւոր ուսմանց համար , ըստ իւր հաս-
տատած կանոնադրի բարեկարգութեան Ազգ.
վարժարանաց՝ վերապահելով իրարու մօտակայ
վարժարաններու միացմամբ Մայրաքաղաքիս
ուրիշ յարմարաւոր թաղերու մէջ եւս երկ-
րորդական ուսումնարաններու անյապաղ բա-
ցումը :

Ղալաթիոյ վարժարանին ընտելարանն ու
նախակրթարանն ընդհանուր ընտելարաններու
եւ նախակրթարաններու տիպար ըլլալու վի-
ճակին պիտի վերածուին , ըստ կանոնադրի
բարեկարգութեան ազգային վարժարանաց :

3. Կեդրոնական վարժարանին մէջ ճիշա-
բար իրենց ուսմունքն աւարտող աշակերտք ,
պարտաւոր պիտի ըլլան իրենց դպրոցական

ընթացքին կրկնապատիկ պայմանաժամաւ
Մայրաքաղաքիս կամ գաւառաց ազգային վար-
ժարանաց մէջ դաստիարակութեան պաշտօն
վարել չափաւոր թոշակաւ :

Այս ուսմունքն աւարտող աշակերտնե-
րէն երկու տարին անգամ մը առ առաւելն
հինգական ուսանող պիտի զրկուին Եւրոպա
մանկավարժութիւն սովորելու համար : Այս
մանկավարժք իրենց վերադարձին պարտաւոր
են ազգային դաստիարակութեան ծառայելու
Մայրաքաղաքիս կամ գաւառաց մէջ , իրենց
Կեդրոնական վարժարանը եւ Եւրոպա անցու-
ցած ժամանակին կրկնապատիկ պայմանաժա-
մաւ եւ չափաւոր ամսականաւ :

4. Ուսումնական խորհուրդը Կեդրոնա-
կան վարժարանին նիւթական մատակարարու-
թեան համար , Հոգաբարձութիւն մը պիտի
ընտրէ որ վերոգրեալ աղբիւրներէն գոյացած
հասոյթներուն վրայ կանոնաւոր հաշուակալու-
թեամբ համարաւոր պիտի ըլլայ , ընդ հրակո-
ղութեամբ Ուսումնական խորհրդոյ , իսկ ու-
սումնական հսկողութեան համար Տեսուչ մը
պիտի կարգէ , որ միանգամայն իւր տրամադ-
րութեան ներքեւ գործադիր պաշտօնատար
պիտի ըլլայ , եւ ազգային վարժարանաց ընդ-
հանուր վերատեսչի պաշտօնը պիտի վարէ :

Ուսումնական խորհուրդը Կեդրոնական
վարժարանի Հոգաբարձութեան եւ Տեսչին
պարտաւորութիւնները գծելու համար Կանո-
նադրութիւն մը պիտի պատրաստէ :

5. Տեսուչն ու Հոգաբարձութիւնը միաց-
եալ պիտի ընտրեն Կեդրոնական վարժարանին
համար պէտք եղած ձեռնհաս ուսուցիչներն
եւ մանկավարժները , Ուսումնական խորհրդոյ
վաւերացնել տալու պայմանաւ :

Կեդրոնական վարժարանի ուսուցիչք ընդ
նախագահութեամբ տեսչին Ուսուցչական խոր-
հուրդ մը պիտի կազմեն եւ պաշտօն պիտի
ունենան նաեւ :

Ա. Ուսուցման եղանակը հետզհետէ բար-
ւոքելու ջանալ , ոչ միայն Կեդրոնական վար-
ժարանէն յաջողակ ուսուցիչներ եւ մանկա-
վարժներ պատրաստելով ապագային , այլ եւ
Կ. Պօլսոյ վարժարանաց մէջ պաշտօն վարող
յաջողակ ուսուցչաց եւ մանկավարժից խոր-

հոգիքն եւս առնելով, ուսուցման համար կա- նոնաւոր հրահանգներ պատրաստել եւ Ուսում- նական խորհրդոյ ներկայել, խակ ուսուցչաց եւ մանուաւոր արդի մանկավարժից չարախա- խան դատախոսութիւն աւանդել յիշեալ վար- ժարանին մէջ:

Բ. Գննութեան արժանի ուսուցչաց եւ մանկավարժից վիճակն ստուգել եւ Ուսում- նական խորհրդոյ ներկայացնել:

Գ. Դատադիրքերը քննել եւ ներկայացը- յել Ուսումնական խորհրդոյ, ինչպէս նաեւ պակասները պատրաստել:

Դ. Մասնաւորաբար ազգային լեզուի մը- ակութեան եւ զարգացման փոյթ տանիլ:

Ե. Ուսումնական խորհրդոյ յանձնարա- տութեան համեմատ այցելել Կ. Պօլսոյ վար- ժարանաց եւ աւարտական քննութիւնները ատարել:

6. Ուսումնական խորհուրդն ամսական 3 օսկիի նպաստ մը կը յատկացնէ Ղալաթիոյ ազգային Մատենադարանին, որ իւր հսկո- ղութեան ներքեւ է:

7. Ուսումնական խորհուրդը դատարա- կութեան սլուաճէին ներածին չափ մրցանակ- անք եւ նպատենք պիտի բաշխէ նախ՝ հա- լաւոր եւ ընտիր դասագրքոց հեղինակներու, երկրորդ՝ այն Հայ վարժարանաց աշակերտնե- րու, որ 2 ըստ պատրաստելի մասնաւոր Կա- նոնադրի մը հաստատուած ընդհանուր մրցմանց մէջ առաջին կը հանդիսանան, երկրորդ՝ կա- ռօտեալ դասատուաց, ուսանողաց եւ վար- ժարանաց:

17 Օգոստ. 1879
Ի Խորհրդարան Ղալաթիոյ

Քաղ. Ժողովն Խորհրդոյս սոյն ծրա- գիւրն Ազգային Ժողովոյ ներկայելէ եւ ա- նոր հաւանութիւնն ստանալէ վերջ՝ հե- տեւալ պաշտօնադիրն ուղղեց մեզ, 1023 թուահամարաւ:

Մեծապատիւ Ատենապետ Էֆէնտի
Ազգային Ուսումնական խորհրդոյ

Պատուարժան խորհուրդդ իւր 43 համար եւ օգոստոս 17 թուական յայտարարովն Կեդ- րոնական վարժարանի բացման եւ դաստիա- րակութեան սլուաճէին գործածութեան ծրա- գիրն Ազգային Վարչութեան Քաղաքական Ժողովոյ ներկայելով առաջարկած էր որ Ազ- ցային Ժողովոյ ղիտութեան հաղորդելէ ետեւ պէտք եղած հրահանգն ուղարկուի Զեզ ի գործադրութիւն:

Արդ՝ կը ծանուցանեմք Զեզ, որ Քաղա- քական Ժողովն հաղորդեց զայն Ազգային Ժո- ղովոյ, եւ յանձնարարութիւն ընկալաւ նոյն ծրագրին գործադրութեան համար: Ուստի ըստ որոշման Քաղ. Ժողովոյ կը հրաւիրեմք Պատուարժան խորհուրդդ որ բարեհաճի ու- սումնական մասին պատշաճ եղած տնօրէնու- թեանց ձեռնարկել եւ դաստիարակութեան սլուաճէին մասին բանակցիլ Տնտես. խորհրդոյ հետ զարժանն ի գործ դնելու համար, ինչպէս որ այս մասին Տնտես. խորհրդոյ եւս պէտք եղած պաշտօնադիրն ուղարկած եմք

Մնամք աղօթարար
Պ. Կ.

13 Դեկտ. 1879 Ներսէս Արքեպիսկոպոս
Ի Պատրիարքարանի Հայոց
Կ. Պօլսո

Եւ որովհետեւ ըստ Կրդ. յօդուածոյ նոյն ծրագրոյն Կեդրոնական վարժարանի նիւթական մատակարարութեան համար Հո- գաբարձութեան մը ընտրութիւնն պարտ էր որ ծրագրոյն տրամադրած աղբիւր- ներէն գոյացած հաստութից վրայ կանո- նաւոր հաշուակալութեամբ համարառու պիտի ըլլար ընդ հսկողութեամբ Ուսում. խորհրդոյ. իսկ Ուսումն. խորհրդոյ հը- կողութեան համար Տեսչի մը, որ միան- զամայն իւր տրամադրութեան ներքեւ գործադիր պաշտօնատար պիտի ըլլար:

ուստի խորհուրդս քանիցս անգամ դիմեց ազգային երեւելիներէն Մեծ. Կիւմէեան Յովհաննէս Էֆէնտիի Հոգաբարձութեան պաշտօնն եւ հրաւիրեց Փափաղեան Ստե- փան Էֆէնտի տեսչութեան պաշտօնն ստանձնելու, սակայն անկարելի եղաւ հա- մոզելը զի իրենց անձնական զբաղումներն պատճառ բերելով, չէին ուղեր ընդունիլ սոյն պաշտօններն, ուստի նկատելով որ Ղալաթիոյ Ազգային Կալուածոց Հոգաբար- ձութիւնն յարաբերութիւն ունի՝ Կեդրո- նական վարժարանի հաստատութեան մէջ 1880 փետր. 18 ին նիստ գումարելով ՚ի Կեդր. վարժարան որոշեց յիշեալ վարժա- րանի Հոգաբարձութեան պաշտօնն յանձ- նել Կալուածոց Հոգաբարձութեան, յաւել- լով անոր վրայ իւր անդամներէն Էլիկիւզէլ Էֆէնտի ուսումնական վերատեսչութեան համար:

Այս կարգադրութեան երկրորդ օրն խորհուրդս փետր. 19 թուականաւ հե- տեւալ նամակը ստացաւ Ղալաթիոյ նո- րընտիր Թաղ. խորհրդէն, որով վարժա- րանի Հոգաբարձութեան ընտրութիւնը կը ծանուցանէր:

Մեծապատիւ տեսնապետ Էֆէնտի
Ուսումնական խորհրդոյ

Թաղիս նորակալմ խորհուրդը այլ եւ այլ կարգադրութեանց հետ վարժարանի խնդիրն ալ նկատողութեան առնելով, մասնաւոր վար- ժարանի Հոգաբարձութիւն մը հաստատեց, ո- րոյ անդամք են

Համբարձում Էֆէնտի	Սարքէչիչեան
Հմայեակ	» Գօլանձեան
Մարգար	» Գուլագսըզեան
Մխիթար	» Գըրմըզեան
Ստեփան	» Միլլէթպաշի

Սոյն կարգադրութիւնը պատուաւորաւ Խորհրդոյդ ի ղիտութիւն ծանուցանելով

Մնամք յարգանք
Ատենապետ
Հմայեակ Գօլանձեան Մ. Հ. Գուլագսըզեան
19 Փետրվար 1889
Թաղ. Խորհրդարան Ղալաթիոյ

Խորհուրդս մինչդեռ կը պատրաստ- ւէր տեղեկութիւն ուղիւ Ղալաթիոյ Թաղ. խորհրդէն թէ՛ Թաղ. Միտուլէն ո՞րչափ գումար պիտի կրնայ յատկանալ Ղալա- թիոյ երկսեռ վարժարանաց, յիշեալ Թաղ. խորհրդոյ կողմէ առ Քաղ. Ժողովն ուղղեալ հետեւեալ բողոքադիրը կարգաց

Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայր

Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ Եկեղեցւոյ Թաղական խորհուրդը իւր պաշտաման կարե-ւոր կէտերը հետզհետէ ձեռք առած ատեն, պարտաւորեալ էր մասնաւոր Հոգաբարձու- թիւնը ցուցնել թաղիս վարժարանաց վրայ, ինչպէս որ Զեզ Բարձր Սրբազնութիւնն իւր Օրհնարէր Կոնդակաւն մեր վրայ ծանր պարտք մը կը դնէր ի մասինս, հետեւելով յայտ հոգ-ւոյ Ազգային Սահմանադրութեան:

Ըստ այսմ փութաց Խորհուրդս վարժա- րանաց Հոգաբարձութիւն մ'ալ կազմել հինգ անդամէ, երեքը Խորհրդոյս անդամներէն եւ երկուքը թաղիս պատուաւորներէն, հրահանգ տալով որ օր առաջ թաղային վարժարանաց հսկողութիւնը ստանձնէ եւ գտածին եւ պա- կասին նկատմամբ տեղեկագրէ:

Մեծապատիւ Ստեփան Էֆէնտի Փափաղ- եան, Տեսուչ թաղային վարժարանաց Ղալա- թիոյ՝ որուն ըստ պատշաճի սոյն տրամադրու- թեանց յարմարելու հրաւէր եղաւ Հոգաբար- ձութեան կողմանէ, պատասխանեց թէ ինքն Ուսումնական խորհրդէն անուանած ըլլալով չկրնար վարժարանին հսկողութիւնը թաղա- կան Հոգաբարձութեան յանձնել:

Հոգաբարձութիւնն առած պատասխանը Խորհրդոյ հաղորդեց եւ Խորհուրդս որոշեց իւր տեսութիւնները Զեր Բարձր Սրբազնութեան առաջի տանիլ, եւ կսուտէ որ նոյն խնամով՝ որով ցարդ թաղիս բարեկարգութեան փոյթ կը տանիք, բարեհաճիք սոյն կէտին ալ լուծուիմք անօրինել:

Թաղական խորհուրդս ուրեմն նկատելով թէ ինքն կոչուած է իւր պաշտաման զօրութեամբ Սահմանադրութեան, եւ պիտի գործէ ճշդիւ անոր արամադրութեանց համեմատ,

Նկատելով թէ Ղալաթիոյ եկեղեցւոյ կից շինուածոյն մէջ գտնուած երկսեռ վարժարանը, թաղային վարժարան է իւր ներքին հանգամանաց եւ պարագայից համեմատ. նկատելով թէ սոյն վարժարանը որ 1877 փետր 14 է ի վեր այս չէնքին մէջ ղեկավարուած է, թաղական վարժարան է՝ նաեւ ըստ վկայութեան նոյն Մեծապատիւ Ստեփան ֓ափաղեան է՝ Ֆէնտիլ՝ պաշտօնական յայտարարութեանց մէջ:

Նկատելով թէ ցարդ Ղալաթիոյ Կեդրոնական վարժարանի մը գոյութիւնը ոչ ուրեք ըսուած կամ լսուած է, թէպէտ անոր բացման համար որոշողութիւն տրուած ըլլայ:

Նկատելով թէ որսիտի եւ ըլլայ նախընթացը, չկրնար Սահմանադրապէս ընդունելի ըլլալ որ թաղական վարժարանաց Տեսչութիւնը Թաղական խորհուրդներէն անկախ ըլլայ:

Նկատելով թէ անհնար չէ արդեան Ուսումնական խորհրդոյ վրայ ամբաստանութիւն մը ընել, եղածը իւր պաշտօնական գործը չըլլալով, եւ ոչ ալ ստուգուած կէտ մը, այլ հաւանականաբար նախընթաց առժամանակեայ դրից հետեւանք մը, Թաղական խորհուրդս չկրնար հրաժարիլ իւր Թաղական վարժարանաց վրայ ունեցած հսկողութենէն եւ իշխանութենէն, եւ Ղալաթիոյ ներկայ երկսեռ վարժարանները իբր թաղային վարժարան կը նկատէ, եւ կը խնդրէ որ Զեր Բարձր Սրբազնութիւնը առանց նախընթաց առժամանակեայ միջոցին կնճիռներուն մէջ մտնելու, բարեհաճի յայտարարել, թէ Ազգային Վարչութիւնը կամ Վարչութեան Ուսումնական խորհուրդը չպահեր կամ ինքնին չանուանեն

Ղալաթիոյ թաղական վարժարանաց Տեսչը եւ չորկեր Խորհուրդս թաղիս մէջ գտնուած վարժարաններուն վրայ ունեցած իրաւունքէն:

4 մարտ 1880 Մնամք խորին յարգանքով
Թաղ. խորհրդարան եւ աջանամուրիւ
Ղալաթիոյ Ի ղիմաց Թաղ. խորհրդոյ
Ատենադպիր Ատենապետ
Հ. Գօլթանեան Գ. Գըլթանեան

Ազգային ժողովն որոշած է թէ՝ Ղալաթիոյ Թաղ. խորհրդոյ պարտաւորութիւնն է իւր թաղին վարժարանաց ծախքըն հոգալ իւր եկեղեցւոյ սովորական հասոյթէն, եւ եթէ արդի հասոյթն անբաւական համարուի առժամանակեայ կերպիւ եկեղեցւոյ կալուածոց հասոյթէն նպաստ մը սահմանուին Ուսումնական խորհուրդս սոյն որոշման վրայ յենլով, հետեւալ նամակն ուղղեց Ղալաթիոյ Թաղ. խորհրդոյ:

Մեծապատիւ տեսնապետ էֆէնտի
Թաղական խորհրդոյ Ղալաթիոյ

Ազգային Ուսումնական խորհուրդն ի նկատի առաւ Պատուարժան Խորհրդոյդ փետր. 19 եւ առ Ամեն. Սրբազան Պատրիարքն ուղղեալ մարտ 4 թուականներով կրկին գրութիւններն, որոց ի պատասխան հարկ կը համարի յայտարարել թէ՝

Ազգ. ժողովն որոշած է թէ՝ Ղալաթիոյ Թաղական խորհրդոյ պարտաւորութիւնն է իւր թաղին վարժարանաց ծախքն հոգալ իւր եկեղեցւոյն սովորական հասոյթէն, եւ եթէ արդի հասոյթն անբաւական համարուի առժամանակեայ կերպիւ եկեղեցւոյն կալուածոց հասոյթէն նպաստ մը սահմանուի: Ուսումնական խորհուրդս Ազգային ժողովոյ սոյն որոշումն իրեն հիմ բռնելով կուզէ գիտնալ նախ թէ՝ Ղալաթիոյ եկեղեցւոյ հասոյթէն ձրչափ գումար պիտի կրնայ յատկանալ Ղալաթիոյ երկսեռ վարժարանաց:

Այս բացատրութիւնը ստիպողական կը համարուիմք, վասն զի տակէց պիտի կարենամք գիտնալ թէ՝ կալուածոց հասոյթէն նպաստի գումարի մը պէտք պիտի ունենայ թաղին վարժարանը, եւ եթէ պիտի ունենայ որչափ գումար պիտի կարենայ յատկացուիլ, եւ այն տեսն խորհուրդս անձամբ Ղալաթիոյ արդի վարժարանաց չէնքին մէջ թաղին վարժարանին յատկանալիք տեղն ու աշակերտները Պատուարժան խորհրդոյդ հսկողութեան ու մատակարարութեանը կը յանձնէ:

7 Մարտ 1880 Մնամք յարգանքով
Ազգային Ուսումնական խորհրդոյ
Ատենադպիր Ատենապետ
Ս. Եագընեան Պ. Պառնասեան

Խորհուրդս սոյն տեղեկութիւնն ըստանալէ վերջ անձամբ Կեդրոնական վարժարան երթալով արդի վարժարանաց չէնքին մէջ թաղին վարժարանին յատկանալիք տեղն ու աշակերտները Թաղ. խորհրդոյ հսկողութեան ու մատակարարութեան պիտի յանձնէր, սակայն յիշեալ Թաղ. խորհուրդն խորհրդոյս յիշեալ պաշտօնագիրն անբաւական համարելով Վարչութենէն կրկին կը խնդրէ, որ բացորոշապէս իրեն յայտարարուի թէ թաղային վարժարանաց տեսչութիւնը Թաղ. խորհրդէն կախեալ է կամ ոչ:

Քաղ. ժողովը Ղալաթիոյ Թաղ. խորհրդոյ սոյն խնդրանաց վրայ հետեւալ պաշտօնագիրը յղեց խորհրդոյս:

Մեծապատիւ Ատենապետ էֆէնտի
Ուսումնական խորհրդոյ

Ղալաթիոյ Թաղ. խորհուրդն ասկէց առաջ յատուկ գրութեամբ մը յայտնելով թէ թաղին մէջ գտնուած երկսեռ վարժարանաց վրայ սահմանադրապէս ունեցած իւր թաղային տեսչութիւնը գործածելու ուղեւուն առթիւ արդեւեքներ երեւան ելած են, որք զինք նոյն

վարժարանաց վրայ ունեցած իրաւունքէն զերկել կը նկրտին, կը խնդրէր որ Վարչութիւնը թաղային վարժարանաց վրայ Թաղ. խորհրդոյ ունեցած սահմանադրական իրաւունքը յարգել տալու համար պէտք եղած տնօրէնութիւնն ի գործ դնէ:

Յիշեալ Թաղ. խորհրդոյ այդ խնդրագիրն անմիջապէս Պատուարժան Խորհրդոյդ հաղորդած էինք ի նկատառութիւն եւ ի պարտուպատշաճ անօրէնութիւն: Այս անգամ նոյն Թաղ. խորհուրդն երկրորդ գրութեամբ մը կը յայտնէ թէ Պատուարժան Խորհրդէդ պաշտօնագիր մ'ստացած է ամսոյս 7 թուականաւ, որով թաղական վարժարանին ներքին տնօրէնութեանց եւ ապագային նկատմամբ իրեն հարցումներ կուղղուին եւ բացատրութիւններ կը պահանջուին, առանց սակայն իւր տեսչական իրաւունքին նկատմամբ, որոյ մասին իր մատուցած նախորդ խնդրագրոյն ի պատասխան Վարչութենէն հրահանգի կ'սպասէր բառ մը կամ հրահանգ մը իրեն ուղղուելու: Եւ յարելով թէ Խորհուրդն անկարող է այս նիւթին վրայ պարտուպատշաճ պատասխանը տալ քանի որ վարժարանաց տեսչութիւնը դեռ չէ ստանձնած, կրկին կը խնդրէ որ թաղային վարժարանաց տեսչութեան Թաղ. խորհրդէն կախեալ ըլլալը կամ ոչ բացորոշապէս իրեն յայտարարուի:

Քաղ. ժողովն, որոյ ուշադրութեան յանձնեցի սոյն խնդիրը, նկատելով որ Ղալաթիոյ Թաղ. խորհուրդն ունի սահմանադրապէս մի եւ նոյն իրաւունքն՝ զոր կը վայելեն ուրիշ Թաղ. խորհուրդք իրենց թաղային վարժարանաց վրայ, եւ այս իրաւունքն յիշեալ Թաղ. խորհրդէն կապաւել չներէր ոչ Սահմանադրութիւնն եւ ոչ ընդհանուր վարժարանաց բարեկարգութեան այն կանոնագիրը՝ զոր Վարչութիւնն հրատարակած է արդէն իբրեւ տիրող օրէնք վարժարանաց համար, որոշեց Պատուարժան Խորհրդոյդ կրկին յանձն առնել որ բարեհաճի յիշեալ Թաղ. խորհրդոյ ըրած օրբանական պահանջումը գոհացնել եւ պէտք եղած տնօրէնութիւնն ի գործ դնել անյապաղ խնդրոյն վերջ տալու համար:

Սոյն որոշումը հաղորդելով Խորհրդոյդ ի

պարտուպատշաճ գործադրութիւն եւ ի տեղեկագրութիւն :

Մնամբ աղօթարար

Գ. Կ.

Ներսէս Արքեպիսկոպոս

14 Մարտ 1880

ի Պատրիարքարանի Հայոց

Կ. Պոլիս

Ինչպէս կը տեսնուի՝ Ղալաթիոյ Թաղ. խորհրդոյ օրինական պահանջումը գոհացուցած է խորհուրդս, յայտարարելով թէ « խորհուրդս անձամբ Ղալաթիոյ արդի վարժարանաց չէնք ըն մէջ թաղին վարժարանին յատկանալիք տեղն ու աշակերտները Թաղ. խորհրդոյ հսկողութեան ու մատակարարութեանը կը յանձնէ » : Ուրեմն ի՞նչ իրաւամբ կը դանդաւորի Ղալաթիոյ Թաղ. խորհուրդն թէ Ուսումնական խորհուրդն բառ մ'անդամ իրեն չէ ուղղած իր տեսչական իրաւանց մասին :

Ուստի խորհուրդս իրաց վիճակն հետեւեալ յայտագրով տեղեկագրեց վարչութեան :

Ամենպատիւ Ս. Պատրիարք Հայր

Նախագահ Ազգ. Քաղաքական Ժողովոյ

Ազգային Ուսումնական խորհուրդս ընկալաւ Ձերդ Բարձր Սրբազնութեան 14 մարտ թուականաւ պաշտօնագիրն ի մասին Ղալաթիոյ Թաղային վարժարանաց, եւ զարմացմամբ տեսաւ որ Ղալաթիոյ Թաղ. խորհուրդն Ուսումնական խորհրդոյ 7 մարտ թուականաւ պաշտօնագիրն անբաւական համարելով վարչութեան կրկին կը խնդրէ որ « Թաղային վարժարանաց տեսչութեան Թաղական խորհրդէն կախեալ ըլլալը կամ ոչ՝ բացորոշապէս իրեն յայտարարուի » :

Ուստի հարկ կը համարուի նախ աստ զը-

նել խորհրդոյ Մարտ 7 թուականաւ առ թաղական խորհուրդ Ղալաթիոյ ուղղեալ պաշտօնագրին պատճէնը (1) :

Ինչպէս պիտի տեսնէ Ձեր Բարձր Սրբազնութիւնն եւ Ազգային Քաղ. Ժողովն թէ Ղալաթիոյ Թաղական խորհրդոյ օրինական պահանջումը գոհացուցած է խորհուրդս, յայտարարելով թէ խորհուրդս անձամբ Ղալաթիոյ արդի վարժարանաց չէնք ըն մէջ թաղին վարժարանին յատկանալիք տեղն ու աշակերտները Թաղական խորհրդոյ հսկողութեան ու մատակարարութեանը կը յանձնէ » :

Ուրեմն ի՞նչ իրաւամբ կը դանդաւորի Ղալաթիոյ Թաղ. խորհուրդն թէ Ուսումնական խորհուրդն բառ մ'անդամ իրեն չէ ուղղած իր տեսչական իրաւանց մասին :

Ղալաթիոյ Թաղ. խորհրդոյ այդ դանդաւորին անտեղի լինին հերքելէ ետեւ Ուսումնական խորհուրդս կը վերադառնայ իր իրաւունքներէն երեւան հանել, որով պիտի տեսնուի թէ Ղալաթիոյ խորհուրդ Թաղ. խորհուրդն թէ կեդրոնական վարժարանի բացման մասին վարչութեան մինչեւ ցարդ տարած բազմազան ջանքերն ի դերեւ հանելու եւ թէ նոյն խնդրով Ժողովոյ որոշման դէմ ելնել կը նկատուի :

Ազգ. Ժողովոյ որոշումը բացարձակ յայտարարութիւն է թէ Ղալաթիոյ Թաղական վարժարանը պիտի ունենայ, եւ այդ վարժարանին ծախքն պիտի հոգացուի նոյն եկեղեցւոյ սովորական հասոյթէն, եւ եթէ արդի հասոյթն անբաւական համարուի առժամանակեայ կերպիւ եկեղեցւոյ կալուածոց հասոյթէն նպաստ մը պիտի սահմանուի :

Արդ Ղալաթիոյ Թաղ. խորհուրդն իր վարժարանին տեսչութիւնն ստանձնել կուզէ եւ կը պահանջէ, բայց առանց ծախքին մասին բառ մ'արտասանելու, առանց յիշելու թէ իւր Սրբապետին կարողութիւնն ի՞նչ է, մինչդեռ մէկ ամիսէ աւելի է որ պաշտօնի կոչուած է եւ Ղալաթիոյ եկեղեցւոյն սովորական հասոյթն ինչ ըլլալը հասկցած է, եւ թէ ինք տակաւին հասկցած ալ չըլլայ, եկեղեցւոյ նախկին հաշիւներն իր ձեռքն ունի, եւ մանաւանդ իր

Տես երես 12 :

մէջ աղդէն Թաղական խորհրդականութիւնն ընող անդամներ ալ ունի, որք զիտեն եւ կըրնան հաստատել թէ՝ եկեղեցւոյ սովորական հասոյթն եկեղեցւոյ սովորական ծախքերն գոյուելէ յետոյ աւելորդ հասոյթներ ունեցած են թէ չէ : Քանի տարիներէ ի վեր որ լինալ եկեղեցւոյ սովորական հասոյթից անտուր կալուածոց Մատուկէն բաժնուեր է, եկեղեցւոյն սովորական հասոյթներն աւելորդ ունեցած է, ինչպէս նախորդ Տնտեսական խորհրդոյ համարատուութեանց մէջ տեսած եմք որ եկեղեցական ծանր դեպքներ չ'ընտան են այդ սովորական հասոյթներով՝ արդի Տնտեսական խորհրդոյ ալ գրեցինք որ Ղալաթիոյ եկեղեցւոյ անցեալ տարւոյ սովորական հասոյթին վիճակն հասկնանք :

Գրեցինք առ Թաղ. խորհուրդն թէ « Ղալաթիոյ արդի վարժարանաց չէնք ըն մէջ թաղին վարժարանին յատկանալիք տեղն ու աշակերտներն անձամբ իրեն պիտի յանձնէ խորհուրդս » :

Ազգային Ժողովն որոշած է « Ղալաթիոյ կեդրոնական վարժարանին չէնք եւ անոր յատկացեալ կալուածներն ազգային կեդրոնական սեփականութիւնն են, եւ անոնց մատակարարութիւնն Ազգային վարչութեան կը վերաբերի » :

Այս որոշման համաձայն՝ այն չէնք որ կանգնեալ է այժմ՝ բոլանդակապէս կեդրոնական վարժարանին կը պատկանի, նոյնպէս եւ կալուածներն, որ ցարդ առանձին Հոգաբարձութեան մը մատակարարութեանը յանձնուած են : Բայց ըստ որում թաղն առանձին վարժարանի չէնք մը չունի տակաւին, եւ ըստ որում կեդր. վարժարանին բացումն եղած չէ տակաւին որ զիտցուի թէ որչափ արահի պէտք կայ, բնականաբար արդի չէնք ըն մէջ առժամանակեայ կերպիւ քանի մը սրահներ պիտի յատկացուին թաղային վարժարանին, մինչեւ որ առանձին տեղ ունենան, եւ նպաստ մ'ալ կալուածոց հասոյթէն եւ այն ալ առժամանակեայ կերպիւ՝ մինչեւ որ թաղն իր հասոյթն իր վարժարանը կարենայ հողալ :

Ահա այս մտք էր որ գրեցինք թէ Թաղային վարժարանին տեղը կը յանձնէ խորհուր-

դըս : Իսկ աշակերտաց մասին գրածնիս աբացատրեմք : Արդի վարժարանին մէջ մանաւանդ մանկանց կողմէ կիսուակէս ուրիշ թաղերէ եկող աշակերտներ են : Ղալաթիոյ եկեղեցին իր թաղին նախակրթարանը խնամեալ պարտաւոր ըլլալով, միայն իր թաղին մանկանց յատկացած է, ուստի ուրիշ թաղերէ եկող այն տղաք որ նախակրթարանի կը վերաբերին, պէտք է արձակուին, որպէս զի իւրաքանչիւրն իր թաղին նախակրթարանին մէջ կը թուին : Իսկ այն աշակերտք որ կանայժմ անդ, եւ ուսումնարանի շրջանին մէջ են թէ Ղալաթիոյ եւ ուրիշ թաղերէ, եւ առաւել ուրիշ թաղերէ, բնականաբար նոր բացուելիք ուսումնարանին մէջ պիտի առնուին :

Ահա այս տնօրէնութիւններն ընելով եւ Ղալաթիոյ Թաղ. խորհրդոյ յանձնուելիք վարժարանին տեղն ու աշակերտները ցուցնելով կարելի է ելնել խնդրոյն մէջէն, բայց նախ պէտք է յայտարար Ղալաթիոյ Թաղ. խորհուրդը թէ իր թաղին վարժարանին ծախքը զխաւօրաբար եկեղեցւոյն սովորական հասոյթն պիտի հոգայ ըստ որոշման Ազգային Ժողովոյ, եւ եթէ բաց ունենայ, կալուածոց Մատուկէն առժամանակեայ նպաստ մը պիտի յատկանայ, որոյ գումարն խորհուրդս պիտի ստաջարկէ եւ վարչութեան որոշմամբ պիտի վճարուի կալուածոց անտուկէն :

Թաղ. խորհրդոյ այս յայտարարութիւնն այնչափ կարեւոր կը համարուի, որ եւ ոչ իսկ վարչութեան առ Թաղ. խորհուրդն ծանուցումն բաւական չեմք ըմբռնել, վասն զի անձամբ տեսնուած ըլլալով այդ նորոգութիւն Թաղական ումանց հետ հետադարձաբար թէ իրենց բուն նպատակն կալուածներն ու վարժարանն թաղին սեփականութիւնն համարել է, եւ իբր այն կը նկատուի որ Թաղ. խորհրդոյ մատակարարութեան յանձնութիւն անոնք, եւ այս նպատակին համակու առաջին քայլ համարած են արդի վարժարանն ու անոր տան մասնաւ 40 ոսկւոյ ամսական գումարը որ կալուածներէն կը վճարուի, ձեռք անցնել, այս կերպով կեդր. վարժարանին բացումն ալ գրեթէ անկարելի կըլլայ, որով այժմ նոյն

չենք եւ 40 ոսկին թաղին պիտոյից կը յատկանայ եւ ապագային կը մնայ մնացորդ կալածոց խնդիրը, մանաւանդ երբ պարտքը վճարուի։ Պէտք է լաւ ուշադիր լինիլ Թաղխորհրդոյ գրութեանց, յորս այդ ծախուց մասին խորին լուծիւն պահուած է։ Իրենց առարկութիւններն լսած եմք եւ ծանուցած թէ ատի բացարձակ հակառակ է Ազգ. ժողովոյ որոշման, որ մինչեւ իսկ նախ այդ կեղծոնական վարժարանին չենք եւ կալուածոց ազգային կեղծոնական սեփականութիւն ըլլալը որոշած է եւ ապա Ղալաթիոյ ժողովըրդին ընտրական իրաւունքը որոշած։

Այս պարագայն եւ այն առարկութիւններն որ այժմ կը յարուցանեն Ղալաթիոյ Թաղական խորհրդականք, նախատեսուած է այդ առաջարկութեանց տէր Մէրեթ-Գուլիէ Էֆ. ի որ սաղէս յայտարարած է յատենի Ազգային ժողովոյ, որ եւ նոյն օրինաց բացատրութիւնն է։

« Նկատելի է միայն որ Ղալաթիացւոց ընտրական իրաւանց դադարման պահուն՝ կարեւոր փոփոխութիւնք տեղի ունեցեր են Ղալաթիոյ կալուածոց նկատմամբ, կեղծոնական վարժարան անուամբ չենք մը կառուցուեր է հոն, եւ Ղալաթիոյ կալուածոց հասոյթն անոր յատկացուելով, յօգուտ հանրութեան բարձրագոյն ուսմունք աւանդելու սահմանուեր է այն, եւ այս տնօրէնութիւնն Ազգային ժողովոյն բովէն անցնելով՝ օրինացոյց տաացեր է։ Արդ երբ Ազգային ժողովը, առանց այս կարեւոր պարագան 'ի նկատ առնելու, որոշէ վերագործնել Ղալաթիացւոց ընտրական իրաւունքն, ինչպէս որ արդար է վերագործնել, մի գուցէ Ղալաթիացին ապագային մէջ թիւր ըմբռնմամբ իրաւասութեան պահանջում մը յարուցանէ այդ վարժարանին եւ կալուածոց վրայ, եւ թաղերէն թէ անոնք թաղային սեփականութիւն են եւ հետեւաբար՝ թաղին կը վերաբերին, եւ կամ զէթ մասնակի կերպիւ թաղին մանկտւոյն դատարարակութեան յատուկ են, եւ այլն։ մինչդեռ ելած են նորա մասնաւորութենէ եւ ընդհանուրին յատկացեալ։ Ապագային մէջ այսպիսի թիւրլուծութեան եւ չփոթութեան տեղի չթողելու համար՝ կը մտածեմ որ Ղա-

լաթիացւոց ընտրական իրաւանց վերագործն որոշելէ առաջ, որ բարեփոխման երրորդ յօդուածին մէջ կ'ամփոփի, նախ անոր առաջին եւ երկրորդ յօդուածները քուէարկէ ժողովը, որոց մին կեղծոնական վարժարանին եւ անոր յատկացեալ կալուածոց թաղային սեփականութենէ դադրելին կը հաստատէ, եւ միւսը Ղալաթիոյ թաղային վարժարանաց իւր Եկեղեցւոյն հոգացուիլը կը տրամադրէ։ . . .

Արդ Ուսումնական խորհուրդս Ազգային ժողովոյ սոյն որոշումը եւ սոյն որոշման յաւակից բոլոր բացատրութիւններն 'ի ձեռին ունենալով, ուղեց նախ դիտնալ թէ Ղալաթիոյ եկեղեցւոյ սովորական հասոյթէն ինչ քանակութիւն պիտի կարենայ սահմանել Թաղական խորհուրդն, (որ անչուշտ Տնտեսական խորհրդոյ քննութեամբն ու հաւանութեամբը պիտի տեղի ունենայ) որպէս զի հասկցուի թէ կալուածոց հասոյթէն՝ ինչ նըպաստ պիտի սահմանուի անոր։ Ահա խընդրոյն բոլոր լուծումն այս կէտին մէջ ամփոփուած է, եւ ոչ միայն թաղային վարժարանին խնդրոյն լուծումը, այլ եւ կեղծոնական վարժարանին բացումն ալ Թաղական խորհրդոյ այդ յայտարարութենէն կախումն ունի, վարն զի սն առնն Խորհուրդս վստահութեամբ պիտի դիտնայ թէ կալուածոց հասոյթէն կեղծոնական վարժարանին ինչ բաժին պիտի մընայ։ Յարդ վճարուածը 40 ոսկի է, եւ վարչութեան նախօրդ որոշմամբ մը՝ որով պարտուց տուելն եւ մայր դրամին վճարման յատկացում են կալուածոց մեծագոյն հասոյթը, աւելի վճարման յոյս չկայ, այդ գումարէն 5 կամ առ առաւելն 10 ոսկի հաղիւ կրնանք նշատ յատկացնել թաղային վարժարանին եւ 30ը յատկացնել կեղծոնական վարժարանին։

Խորհուրդս արդէն ըստ որոշման Ազգային ժողովոյ եւ Վարչութեան եւ ըստ գեղտեմբեր 13 թուականաւ Բարձր Սրբազնութեանդ յանձնարարութեան՝ այդ կեղծոնական վարժարանի բացման նախապատրաստութիւններէն տեսած է, եւ այս առթիւ կը փութայ նախ ծանուցանել թէ Ղալաթիոյ կալուածոց Հոգաբարձութիւնն՝ որ կազմուած է Վարչութեանդ, կոչեց նաեւ 'ի Հոգաբարձութիւն

կեղր. վարժարանին, յաւելլով անոր վրայ իւր անդամներէն Նիխիւզէլ Էֆէնտին, ուսումնական վերապետութեան համար։ Պատրաստած է նաեւ Եփէքճեան Էֆէնտի ներքին տեսչութեան, զի ֆալագեան Էֆէնտի ինչպէս ասկից առաջ, նոյնպէս՝ եւ այս անգամ պնդեց իւր հրաժարականին վրայ։ Կեղր. վարժարանին Ա. եւ Բ. տարւոյ դասարանները միայն պիտի բացուին յառաջիկայ տարի եւ այս ծախուց համար ամսական 53 ոսկւոյ պէտք կայ։ Արդ 30 ոսկին Ղալաթիոյ կալուածոց անուկէն հոգալով։ մնացորդ 23 ոսկին ալ կեղր. անտուկէն վճարելու մասին Պատկառելի Վարչութեանդ վերջնական եւ ստիպողական հրամանին կսպասեմք առ Նիւմուրից Հոգաբարձութիւն, որպէս զի յառաջիկայ Ապրիլ 1էն սկսեալ չնորՀ ընէ 23 ոսկի ամսական վճարել Ուսումն. Խորհրդոյն հրամանին 'ի հաշիւ դաստիարակութեան յատկացեալ 50000 դրուէն։

Ահաւասիկ Ղալաթիոյ Թաղային վարժարանին եւ կեղր. վարժարանին խնդիրներն միանգամայն տեղեկագործելնք, սպասելով Պատկառելի Վարչութեանդ որոշմանը։

Մնաւոր խորին յարգանք

'ի զիմաց Ազգ. Ուսումն. Խորհրդոյ

Ատենադպիր Ատենապետ

Սիմեօն Եագրճեան Պ. Պառ.Աստեան

19 Մարտ 1880

'ի Պատրիարքարանի Հայոց

Կ. Պօլիս

Քաղ. ժողովն Ապրիլ 3 ին հետեւեալ պատասխանն տուաւ։

Մեծապատիւ Ատենապետ Էֆէնտի

Ազգ. Ուսումնական Խորհրդոյ

Պատուարժան Խորհրդոյդ 177 թիւ վերջին յայտագիրն ստանալով, որով Ղալաթիոյ կեղր. վարժարանն յառաջիկայ Մայիս 1 էն բանալու

ձեռնարկած լինելնիդ յայտնելով։ Կը խնդրէք որ ամսական 2500 դրչի գումար մը վճարուի կեղր. անտուկէն Մայիս ամսէն սկսեալ, կը փութամք ծանուցանել թէ Քաղ. ժողովն իւր այս աւուր նիստին մէջ Ձեր սոյն յայտագրոյն հետ Ազգ. ժողովոյ յանձնարարութիւնն ալ ստանալով 'ի մասին առաջարկութեան ֆալագեան Ս. Էֆէնտի վրայն եղանակի վճարման դատարարակութեան յատկացեալ գումարին, թէ՛ այս երկու առաջարկութիւնները եւ թէ՛ կեղր. անտուկի արդի վիճակը նկատողութեան առնելէ ետեւ որոշեց եւ ըստ որոշման գրեցինք առ Նիւմուրից Հոգաբարձութիւնն որ յառաջիկայ Մայիս ամսէն սկսեալ առ այժմ ամսական 2500 դրչի գումարն անխափան վճարուի Պատուարժան Խորհրդոյդ հրամանին 'ի հաշիւ դաստիարակութեան յատկացեալ գումարին, մինչեւ որ կեղր. անտուկը կարենայ ելմոացոյցին որոշած գումարն ամբողջապէս վճարել։

Քաղ. ժողովը Խորհրդոյդ մի եւ նոյն յայտագրէն տեղեկացաւ նաեւ թէ Ղալաթիոյ կալուածոց անտուկէն յանուն վարժարանաց յատկացեալ նպաստի գումարէն միայն 3000 դրչ կեղր. վարժարանին վերապահելով՝ մնացեալ 1000 դրչը 'ի նպաստ թաղային վարժարանին վճարել տալու տնօրինութիւն ըրած էք։ Այս մասին Ղալաթիոյ կալուածոց Հոգաբարձութեան կողմէ դիտողութիւն եղաւ յատենի Վարչութեան թէ կալուածոց անտուկէն 'ի բաց առեալ 1000 դրչի գումարն՝ զոր 'ի նպաստ թաղային վարժարանին վճարել յանձն առած է ըստ տնօրինութեան Խորհրդոյդ, անկարող է մնացեալ 3000 դրչն, ամբողջ կեղր. վարժարանին համար վճարել, այլ պարտաւոր ըլլալով սընտուկին տուկոսաւոր պարտուց համար ալ գումար մը սահմանել, ստիպուած է առ այժմ 1500 դրչ եւ եթ վճարել 'ի նպաստ կեղր. վարժարանին եւ 1500 դրչն ալ 'ի վճար տուկոսաւոր պարտուց սահմանել։

Արդ՝ յիշեալ Հոգաբարձութեան սոյն դիտողութիւնն ալ՝ զոր Քաղ. ժողովն իրաւացի համարեց եւ ընդունեց, Պատուարժան Խորհրդոյդ հաղորդելով Ձեր ուշադրութեանը կը

յանձնեմք, որպէս զի ըստ այնմ կեդր. վար-
ժարանի ծախքն համեմատէք:

Մնամք աղօթարար

Պատրիարք Կ. Պօյսոյ

ՆԵՐՍԷՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

3 Ապրիլ 1880

ի Պատրիարքարանի Հայոց

Կ. Պօլիս

Ահաւասիկ խորհրդոյս անդամներէն
կեդրոնական վարժարանի որոշեալ վե-
րատեսուէ Մեծ. Էլիկիւղէլ էֆէնտիին մեզ
ուղղած դիտողագիրը:

Մեծապատիւ Ատենապետ էֆէնտի Ազդ.
Ուսումնական խորհրդոյ:

« Կեդրոնական վարժարանի խնդրոյն վը-
րայ պարտք կը համարեմ քանի մը դիտողու-
թիւններ ընել, որպէս զի յայտնուի թէ ինչ
դարձուածներ եղան վարժարանին Ուսումնա-
կան խորհրդոյ ձեռամբ բացումն արդիւնու
համար:

Փետր. 18 ին Ուսումնական խորհուրդը
Ղալաթիոյ խորհրդարանը նկատ ընելով, կայ-
ուածոց Հոգաբարձութիւնը ամբողջովին (3
հոգի) եւ զիս կեդրոնական վարժարանի Հո-
գաբարձու ըլլալու արժան դատեց եւ իւր այս
որոշումը մասնաւոր պաշտօնագրով իրենց ալ
իմաց տրուեցաւ: Քանի մը օր վերջը ես ինքս
անձամբ երթալով եւ Պէյլիկեան Ստեփան է-
ֆէնտին տեսնելով թէ իրեն եւ թէ իր ըն-
կերներուն յիշեալ վարժարանի Հոգաբարձու-
թիւնը ընդունելին ինձ բերանացի իմացուց,
միայն սա պայմանաւ որ ես ալ Կալուածոց
Հոգաբարձութեան մէջ մտնեմ:

Ես գէտ կեցայ Կալուածոց Հոգաբարձու-
թեան մէջ մտնելու, շատ իրաւացի պատճառ-
ներ յառաջ բերի, բայց օգուտ չըբաւ. ուս-
տի տեսնելով որ եթէ ես այս պաշտօնը չըն-
դունիմ, անոնք ալ դպրոցի Հոգաբարձութիւ-
նը պիտի չընդունին եւ նորանոր դժուարու-
թիւնք պիտի ելլեն ուրիշ Հոգաբարձութիւն

մը կազմելու համար, հաւանութիւն տուի ի-
րենց ընկերանալու:

Ժամանակ անցնելով երբ ես, իբրեւ Ղե-
րատեսուէ կեդրոնական վարժարանի, տեսչին
եւ դասատուաց ցուցակը նոյնպէս եւ վար-
ժարանի ծրագիրն պատրաստեցի, օր մը ան-
ձամբ գացի Պէյլիկեան Ստեփան էֆէնտիին
իմացնելու համար թէ ըստ օգոստոս 17 ծրա-
գրի որովհետեւ « Տեսուչն ու Հոգաբարձու-
թիւնը միացեալ պիտի ընտրեն կեդրոնական
Վարժարանին համար պէտք եղած ուսուցիչ-
ներն ու մանկավարժները » Ժամադրութիւն ը-
նենք նիստ մը ընելու համար, թէ հրատարա-
կութեան տրուելիք ծրագիրն եւ թէ դասատու-
ուաց ցուցակը քննենք եւ ին. առջի բերան Պէյ-
լիկեան էֆէնտի շատ դժուարութիւն ցուցուց
ըսածներս հասկնալու համար, բայց երբ խնդիրը
պարզեցի, պատասխանեց, « Օր մը, եթէ այս
գործին վրայով կուր մը ունենանք Ղալաթիոյ
Թաղական խորհուրդին հետ, Քաղաքական
ժողովին պիտի ներկայանանք, ես ալ նոյն
ժողովին ատենապետն ըլլալով միանգամայն
դատաւոր ու դատախազ չեմ կրնար ըլլալ,
ուրեմն կեդրոնական վարժարանի Հոգաբար-
ձութիւն չեմ կրնար ընդունիլ, նոյնպէս եւ իմ
ընկերներս ալ պիտի չընդունին այս պաշտօ-
նը »: Անցեալն յիշելի էֆէնտիին թէ արդէն
ընդունած են, ինքն ու իր ընկերները, եւ ու-
րիշ ժամանակ այսպէս առարկութիւններ ը-
րած չէր, բայց սնդեց էֆէնտին թէ սխալ
հասկացողութեան հետեւանք է այն. թէ եւ
իրենց գրուած նամակը Պատ. խորհրդոյդ կող-
մանէ ընդունած էին որ ամենեւին սխալ հաս-
կացողութեան տեղի չէր տար եւ որ զլրա-
ւորն է ինձ հետ ալ վերոյիշեալ բանակցու-
թիւնը ունեցած էր:

Մայիս 1 ին Պատ. խորհուրդը պաշտօն
յանձնած էր ինձ Եգնիկ էֆէնտիին ընկերակ-
ցութեամբ ներկայանալ Քաղաքական ժողովոյ
եւ տարւոյս ապրիլ 3 թուական պաշտօնագ-
րով խորհրդոյս խոստացուած 2500 դուրուչի
վճարման մասին ստոյգ տեղեկութիւն մը առ-
նուր: Քաղաքական ժողովոյ անդամք նոյն օրը
բերանացի յայտնեցին թէ իրենց կողմէն Ու-
սումնական խորհուրդին եւ Ազգային Ընդհա-

նուր ժողովոյ գրուած նամակները սխալման
հետեւանքներ են եւ թէ մտուկին վիճակը
շատ դէշ է ու ստակ չկայ որ ամիսը 2500
դուրուչ ալ դատարարութեան համար վճա-
րէ: Իրենց յիշեցուցի 3 ապրիլ թուականաւ
մեզի գրածնին, Մարտ 31 թուականոց Հ-
դաբարձութեան եւ Տեսուչական խորհրդոյ
գրածներնին, նոյնպէս եւ Ընդհանուր ժողո-
վոյ գրածնին, որոց ամենքն ալ մէկ միտք կը
պարունակեն, այսինքն « Ազգային մտուկին
վիճակն նկատողութեան առնուով, որոշած են
ամեն վճարումներէ առաջ Ուսումնական խոր-
հրդոյ հրամանին Մայիս ամսէն սկսեալ ամ-
սական 2500 դր. անխափան վճարել »: Այս
փաստերուն ի պատասխանի ըսին թէ Պէյլիկ-
եան Ստեփան էֆէնտին մեզի հաւատացուց
որ մտուկը 2500 դր. կրնայ տալ, մենք ալ
վստահանալով անոր խօսքին որոշումնիս
տուինք, յետոյ տեսանք որ չկրնար տալ ե-
ղեր եւ ին:

Ահա այսպէս հակասական ընթացիւք ո-
րոշեալ գումարը չվճարուեցաւ, եւ ոչ իսկ
վարժարանին չէնք յանձնեցաւ: Ասկէ կը հե-
տեւի թէ խորհրդոյդ ընտրած վերատեսուչն
ամեն ջանք ի գործ դրաւ իւր պաշտօնը կա-
տարելու եւ կեդր. վարժարանն բանալու հա-
մար, բայց Պատկ. Քաղաքական ժողովն իւր
որոշումը չգործադրեց ստակի պակասութիւնը
պատճառ բռնելով, եւ Ղալաթիոյ Թաղական
խորհուրդը Ազգային ժողովոյ որոշումը չը
յարգեց, ուստի խորհրդոյդ ընտրած վերատե-
սուչը բոլորովին անգամ է որ եւ է պատառ-
խանատուութենէ, որ անոնց միայն կը վերա-
բերի որք ուղղակի կամ անուղղակի արգելք
եղան այս գործին:

Մնամ յարգանք

4 Յուլիս 1880

Ս. Էլիկիւղէլ

Ուսումն. խորհուրդս կը ցաւի որ,
Կեդր. վարժարանի բացման համար իւր
ձեռնարկած այնչափ բանակցութիւնք եւ
քրտնաթոր աշխատութիւնք բաղձացեալ

արդիւնքը չ'են կրցած արտադրել, իւր
կարողութենէն դուրս պարագաներու եւ
աղբեցութիւններու, ինչպէս նաեւ պէտք
եղած միջոցներու եւ ձեռնտուութեանց
պակասութեան պատճառներով, որոց
պատասխանատուութիւնն իրեն չվերաբե-
րիր երբէք:

Նմանօրինակ պատճառներ խորհրդ-
դոյս արդեւք եղան թաղային վարժարան-
ները բարեկարգութեան ձեռնարկելու,
ինչպէս կը տեսնուի իսկիւսարի միացեալ
վարժարանաց, Թօք քարուի, Էյուպի
Գուգիւնճուգի եւ ուրիշ թաղերու վար-
մունքէն:

Օժանդակ Մասնախորհուրդ

Խորհուրդս նկատելով որ իրեն վե-
րաբերեալ գործոց ամենուն հասնիլ ան-
կարելի է, ըստ որում ինք միայն ընդհա-
նուր խնդրոց վրայ խորհելու եւ որոշում
տալու ժամանակ կրնայ ունենալ, մինչ-
դեռ կան շատ մը երկրորդական խնդիր-
ներ, ոչ ինչ խնամոց ու կարեւորութեան
արժանի, որոց պէտք է նմանապէս ուշա-
դրութիւն մատուցանել: Օժանդակ մաս-
նախորհուրդոյ մը կազմութեան հարկ
տեսաւ եւ կանխաւ Ազգ. Վարչութեանդ

հաւանութիւնն ստանալով ընտրեց զայն :

Օժանդակ Մասնախորհուրդը թաղային և գաղութական խնդիրներով, վարժարանաց ճրագիրներու քննութեամբ ըզբաղեցաւ, յաճախ այցելութիւններ և քննութիւններ ըրաւ, 1873ի բարեկարգութեան հրահանգին գործադրութեան հոգտարաւ, վարժարանաց շինութեան, աշակերտաց ընդունելութեան և բարեկարգութեան ծրագրեր յօրինեց Մայրաքաղաքիս և գաւառական Ազգ. վարժարանաց վիճակագրութիւններն պատրաստեց: Վերջապէս խորհրդոյն հաւանութեամբ միշտ աջակից գտնուեցաւ մեր տաժանելի աշխատութեանց :

Խորհուրդս հետեւեալ խնդիրներով ևս զբաղեցաւ, որոնք մանրամասնաբար հրատարակել հարկ չդատեց :

1. Հոսպարակային դասախօսութեանց խնդիր .

2. Հոգեբարձութեանց և տեսչաց խորութեան խնդիր .

3. Վաւերացում գաւառ . Ոստումն խորհրդոյ .

4. Գասաւորաց վկայագրոյ խնդիր .

5. Վարժարանաց միացման խնդիր .

6. Կրօն . գասախօսութեանց խնդիր .

7. Վաւերացում Ազգ. ընկերութեանց

8. Վաւերացում դասագրոյ .

Հարկ կը համարուի յաւելուլ թէ Խորհուրդս իւր պաշտօնավարութեան շրջանին մէջ 302 պաշտօնագիր և 400 շրջաբերական ուղղած է Ազգ. վարժարանս և Գաւառական Վարչութիւնս, ինչպէս նաև իւր Օժանդակ Մասնախորհրդոյ կողմէ 100 նամակ յղուած է առ զանազանս, որոնք այժմ չկրցինք հրատարակել ինչ ինչ պատճառներով եւ եթէ հարկ տեսնայ Պատ. Ժողովը՝ Բ. ըսպիտակ տեսրով մը զանոնք ևս ամբողջ հրատարակեալ կը մատուցանեմք :

Խորհուրդս նկատելով որ ՚ի մօտոյ Ազգ. Ժողովոյ որոշմամբ Վարչութիւնը պիտի վերակազմի, իւր պաշտօնը դադարեալ համարելով հրաժարականի հարկ չտեսաւ, այլ պաշտօնարանը թափուր չը ձգելու համար Օժանդակ Մասնախորհրդին արտօնութիւն տուաւ իւր նիստերը կանոնաւորապէս շարունակելու և առօրեայ ընթացիկ գործերը կարգադրելու, մինչև յետոյ վերակազմութիւն Վարչութեան՝ Ազգ. Ժողովոյ որոշմամբ :

3 Հոկտեմբեր 1880

Ազգ. Վարչութեան Ուսումն. Խորհրդոյ

Ատեմապիր

Ատեմապետ

ՍԻՄԵՐՆ ԵՍԶԸՃԵԱՆ

Պ. ՊԱՌՆԱՍԵԱՆ



44. 412